ՆՈՐ–ԴԱՐ

21. ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ Երեքշաբթի 7 փետրվարի **1884** Երեքշաբթի 7 փետրվարի ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 21.

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Հասով՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում վերևյան խմբագրատները։

Խմբագրության հասցեն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“.

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարության վճարը բաժին 2 կ. բնկալմների համար՝ կբկնապատիկ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ–ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԹԻՖԼԻՍՈՒՄ **1884** ԹՈՒԱԿԱՆԻՆ ՅՈՒՆՎԱՐԻՑ։

ՅՐԱԳԻՐ

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ կարգադրություններ։
II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ յոդուածներ-առօրեայ ամեն տեսակ խնդիրների մասին։
III. ՔՐՈՆԻԿՈՆ—լուրեր, առօրեայ անցքերի համառօտ տեսություններ, պատահական յոդուածներ զանազան նիւթերի վերաբերությամբ։
IV. ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ—Ութսիայից և արտասահմանեան ամենայն տեղերից։
V. ՔԱՂԱՔԱԿԱՆ — Քաղաքական կեանքի և երևոյթների վերաբերեալ տեսություններ, յոդուածներ և լուրեր։
VI. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։
VII. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։
VIII. ԱՌԵՒՏՐԱԿԱՆ տեղեկություններ։
IX. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Ֆելիետօններ, պատկերներ, զրույցներ, վէպեր, վիպասանություններ, գիտություն, գեղարուեստների, արհեստների և արդիւնագործության ամեն ճիւղերին վերաբերեալ աշխատություններ և քննադատական յոդուածներ։
X. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—Հայոց և օտար լեզուներով։

ՏԱՐԵԿԱՆ գինն է 10 րուբլի. 6 ամսուան 6 րուբլի, հասով 5 կոպ.

Խմբագիրը հրատարակիչ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

Ծանօթ. „ՆՈՐ-ԴԱՐԸ“-ը կունենայ Թղթակիցներ եւրոպական գլխաւոր և նշանաւոր քաղաքներում. Նոյնպէս Թիւրքիայում և Պարսկաստանում։ Թերթին բաժանորդ գրուել կամ խմբագրության հետ հաղորդակցություն մէջ մտնել ցանկացողները դիմում են խմբագրությանը հետևեալ հասցէով Тифлисъ, Редакція „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis (Caucase) Rédaction „NOR-DAR“.

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.—Մի զրպարտություն.—Ընտրատուներ.—Պատասխան.—Նոր հրատարակություններ Սահակ վարդ. Սալխանով.—Զաւթադպծվիչները Ակբալնդրապոլում.—Հաշուառությունը Ախալքալաքում.—զողություն.—Նկրկայացում Բաղդում.—Թղթակցություններ.—Ութսիայից և Թիւրքիայից.—Քաղաքական լուրեր.—Խառն լուրեր.—Հեռագրեր.—Յայտարարություններ.—Հաշուառությունը Ախալքալաքում.—Հայաբակաց որդեգիրը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՍԱՐԱԿԱՑ ՈՐԴԵԳԻՐԸ.

—

—„Այժմ ինչ պատահական տանեմ մօրս, նա ազատում է ինձ, մտածեց ինքն իրեն Դէօրգը. առաջին քայլափոխում իսկ ես անյաջողության եմ հանդիպում... Եւ եթէ այսպէս շարունակուի, եթէ իմ մօր գուշակություններ ըլ կատարուին... Ո՜հ ես այն ժամանակ ինձ ջուրը կը ձգեմ...—Բայց ինչ չիմարն եմ ես, նորէն սկսա էր տալիս իրեն Դէօրգը. դեռ ինչ է պատահել որ ես այսպէս յուսահատվում եմ։ Բժիշկը ինձ այնպէս մի մերժողական բան չ'ասաց։ Նա կրկնեց այն, ինչ որ ինձ ասել էր Լենջոյքի երեկոյեան. նա կարծում տուաւ Տանիէլեանցին տեսնել։ Ո՜հ, սրան էլ չը կարողացայ տեսնել, որովհետև ուշացայ. ինչ վնաս. Հնարա չը լինի երկու ժամէն լինի։ Կը տեսնուինք, կը խօսենք, դեռ ժամանակ ունինք“։

Այս մտածմունքներով քաջալերում էր իրեն Դէօրգը և աշխատում էր զօռով ցրել այն անձուկը, որ իւր կամաց հակառակ գալիս, ծանրանում էր իւր սրտի վերայ։ Այս պատճառաւ իսկ նա իւր քայլերը դարձեալ ուղղեց դէպի այգին։—„Ամառով կը պրօնեմ, մինչև որ երկու ժամը կը լրանայ“, մտածեց

Թիֆլիս, 6 փետրվարի 1884.

ՄԻ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ

—

—Ով որ մեր մամուլի անցեալի և ներկայի հետ քիչ շատ ծանօթ է, դիւրութեամբ կարող էր մտածել, որ „Նոր-Դար»-ի լոյս աշխարհ գալը մեծ ցաւ պէտք է պատճառէր պ. Արծրունուն։ Եթէ »Մշակը» պ. Արծրունիի հետ միասին լոկ սկզբունքի, հայացքների հակառակութիւն ունենային «Նոր-Դար“-ի և նրա խմբագիրը Ս. Սպանդարեանի դէմ, եթէ Արծրունին լրագրական, հասարակական ասպարիզում կամենար աղնիւ մրցութեան մէջ մտնել Սպանդարեանի հետ, այն ժամանակ «Մշակի» ընթերցողներն ազատ կը լինէին անձնական և անմիտ հայհոյանքներ կարդալուց, որոնք ոչինչ չ'ապացուցանելով՝ խելքի և ճաշակի տէր մարդիկներին միմիայն ցանձրացընում են։

Հազիւ թէ «Նոր-Դար»-ի մի քանի համարներն հրատարակուել էին, արդէն «Մշակը» կողմնակի թէ ուղղակի սկսեց յարձակուիլ „Նոր-Դար“-ի դէմ։ Եսամօլութիւնից գրդռուած՝ Արծրունին սկսեց ծաղրել «Նոր-Դար»-ին, նրա խմբագրին, նրա աշխատակիցներին։ Թէպետև նրա ասածներն ոչինչ հիմք չունէին, բայց նպատակը պարզ էր—ոչնչացնել «Նոր-Դար»-ի նշանակութիւնը, արգելք լինել բաժանորդագրութեան։

Ինչպէս անցեալում, նոյնպէս և ներկայումս „Նոր-Դար“-ի խմբագիրը հայհոյանքներին հայհոյանքներով չէ պատասխանել և շատ տեղ էլ լռութեամբ անցել է։ Այդ կարող են խոստովանել և նրա անձնական հակառակորդները։

Անտարակոյս, շատերը ինչպէս միշտ ասել են, այժմ էլ կարող են ասել մեզ, թէ չարժէ այդպիսի յարձակումներին պատասխանել, թէ հասկացողն գիտէ, ուր մնաց թէ այդ մասին մենք առաջնորդող էլ ենք գրում։

Այդ ճշմարիտ է, բայց այն էլ պէտք է հաշուի առնել, որ կան մարդիկ, որոնք ուրիշի խելքովն են մտածում։

Այս անգամ անհրաժեշտ ենք համարում խօսել, որովհետև Արծրունին իւր վերջին և իրեն վայել միջոցն է գործ դնում «Նոր-Դար»-ի և նրա խմբագրի դէմ՝ խառնելով իւր անձնական, նեղ հաշիւները այնպիսի մի հասարակական, մեծ խնդրի հետ, ինչպիսին է կաթոլիկոսական խնդիրը։

Նաբաթի օրուայ փետրվարի 4-ին «Մշակի» № 19-ի առաջնորդողում *) Թիֆլիսի եկեղեցիներում կատարուած ընտրութիւնների վերայ խօսելով՝ պ. Արծրունին ասում է.

„Դնցուք թէ Գրիգոր Արծրունին, որ Քամոյեանց եկեղեցու ժամատրներից

*) Արծրունին դիտմամբ է այդ յօդուածը շաբաթ օրը տալել, որ մենք չը կարողանանք շուտ պատասխանել, որ գաւառների համար մեր պատասխանը 10 օրով յետ ընկնի։ Խմբ.

—Պ. բժիշկը ասաց որ իմ մասին ձեզ հետ խօսեցած է պ. Սօմարեանցի տանը...

—Ինչ, չեմ յիշում։

—Այն որ ինձ համար տաղտագրութիւն բացուեցաւ և ինձ Պետերբուրգ...

—Այո, այո, այժմ յիշում եմ. դուք պատմեցիք որ վիսկանագործի մօտ էք լինում։ Եւ դուք Թողել էք արդէն այդ պաշտօնը։

—Այո։

—Շատ լաւ էք արել։ Այդ տեսակ գծուծ պաշտօնը ձեզ վայել չէ, դուք չնորհալի տղայ էք, և կարող էք ուրիշ լաւ գործերում առաջ գնալ։

Գէօրգը, որ մինչև այն տատիկի տագնապն մէջ էր, այս խօսքերից յետոյ մի վրդը չունէր առաւ։

—Այժմ ինչ էք հրամայում, որ անեմ դարձաւ նա Տանիէլեանցին։

—Մի վրդը ինձ ժամանակ տուէք։ Այս քանի օրը ես խառնուած եմ սեփական գործերով։ Ապատ միջոց գտնելուց անմիջապէս ձեր մասին հարկաւոր հոգացողութիւն կանեմ։

—Ուրեմն ինքը կը հրամայէք որ կրկին ներկայանամ ձեզ։

—Երկու շաբաթից յետ։

—Բայց այդ շատ երկար ժամանակ է ինձ համար, պ. Տանիէլեան։

—Ուրիշ կերպ անկարելի է, սիրելի բարեկամ, երկու շաբաթում էլ հարկաւ կարելի է տեսնուել սաւօրագրուող պարտիների հետ։

—Դանէ, կարող եմ յուսալ որ այդ փողերը կը ժողովուի և ես կերևան Պետերբուրգ մէկ բան սովորելու։

—Ի հարկէ, բարեկամ, և հարկէ։ Դուք դեռ երիտասարդ էք, դուք շատ բան կարող էք սովորել այսուհետև։

—Ուրեմն երկու շաբաթից յետոյ ներկայանամ Ձեզ, տեղից բարձրանալով հարցրեց կրկին Դէօրգը։

—Այո, այս կրկնակի չէ, մեւս կրկնակի։ Այս երկու շաբաթում դուք կարող էք մի բանով պարապել, օրինակ հենց ռուսերէն լեզուով։

—Եւ մինչև այն դուք կը հոգաք իմ մասին...

—Այո, այո, միամիտ եղիք. կ'աշխատեմ որքան կարող եմ։

—Մեծապէս շնորհակալ եմ, պ. Տանիէլեան, դուք շատ մեծ բարերարութիւն էք անում ինձ և իմ խեղճ մօրը, մենք երկուսս էլ անպաշտպան ենք և կարօտ ձեզ նման բարի մարդկների օգնութեանը։

—Այո, մեր պարտքն է, կաշխատենք։

—Ուրեմն...

—Գնացէք, միամիտ եղէք, անպատճառ կ'աշխատենք։

Գէօրգը շատ խոնարհ գլուխ տալով դուրս եկաւ սենեակից։

—Ախտաս, ինչ էր այդ երիտասարդը, ընդունարանը մտնելով հարցրեց ամուսնուց տիկին Էլիզավետասա Սերգէեվնան. այդպէս էր կոչում նրան պ. Տանիէլեանցը։

—Մի խեղճ տղայ է. լաւ երգում է։

Թերբուրգ մէկ բան սովորելու։

կոչակարը" բաւական յաջող էր։ Իսկ ամսոյս ուղեւն Թիֆլիսի դերասանական խմբի անդամ պ. Տէր-Դաւթեանցը՝ թատերասէրների մասնակցութեամբ, կը ներկայացնէ „Շուշանիկ" ողբերգութիւնն և „Պետրոս տիչհուր" վոդեվիլը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ, 2 փետրվարի.—Կարդալով ձեր „Նոր-Դար"ի պատուական համարները, չատ ուրախանում եմ և անկեղծ սրտով չնորհաւորելով, ի սէր արդարութեան լանգրում եմ մի վոքրիկ անկիւն չնորհէք իմ այս երկտողիս, որով արդարութիւնը պահպանած կը լինիք։

Անցեալ ամսի 22-ին՝ կիրակի օրը բաղդ ունեցայ պատահել տեղոյս եկեղեցւոյ հայեաթոռի, մի քանի խմբակների, (բաղդ ունիցայ ասում եմ, որովհետև քաղաքից բացակայ էի և այդ խմբակ րոպէին եկայ քաղաք որ խմբակների մաս էին գալիս հայեաթոռի) որոնք խօսում էին կաթողիկոսական ընտրութեան վերայ, հետաքրքրութիւնս մղեց լինէ դէպի այդ խմբակները մօտից տեղեկանալու այդ խօսակցութեանը. և ահա մօտից հետևեալ խօսքերը լսեցի. (մոռացայ այստեղ յիշել, որ, այդ խմբակները կազմում էին, ԹԷ Ախալքալաքի և ԹԷ նորա գաւառի ամբոխը, որոնք Տփխիսի սրբազան Ա. Ռաֆֆնորդի կաթողիկոսութեան համաձայն, հաւաքուել էին լսենց կողմից պատգամաւոր ընտրել կաթողիկոսի ընտրութեանը մասնակցելու)։ Պարոննէր, մենք մեր պատգամաւորը ընտրենք անպատճառ Գրիգոր Աբծրունուն, նա „Մշակի" խմբագրն է, նա հարուստ է, նա ի լուսաւորչէ է, և այլն պատուանուններով էին գոչում նորան, ԹԷ և խեղճ ամբոխից մեծ մասը նորան չէր ճանաչում և անունը երբէք չէր լսացել։ Բայց այդ բանը ովքե՞ր էին անում, մեր „Մշակի" խմբագրին մօտից բարեկամ և ԹղԹակից երկու պարոններ, պ. պ. Խ. Մատանկոզեանց և Բ. Պէհլիկեանց, որոնք կարծես ԹԷ պ. Աբծրունուց ասպզրած էին, որ անպատճառ յաջողեցնեն որ Գրիգոր Աբծրունին լինի, և լինչ էք ասում, այնքան մոան ժողովրդեան մէջ և զանազան բաներ խօսեցան, որ խեղճ ամբոխին համոզեցնին, որ պ. Գ. Աբծրունուն նշանակեն պատգամաւոր, այսպէս դեռ չատ մարդոց որոնք նոր էին գալիս հայեաթոռ, համոզում էին, մինչև որ այդ օրուայ ժողովին նախագահող՝ Արժանապատիւ Հ. Ցովհաննէս քահանայ Քաջազնունին եկաւ և հրաւիրելով բոլորիս դահլիճը և մի կարճ և հասկանալի չառաջաբանով բացատրեց, ԹԷ ինչու ենք հաւաքուել և ԹԷ ինչպէս պէտք է ընտրենք որ առանց կողմնապահութեան լինի, և յետոյ սրբազան առաջնորդից եկած հրամանագիրը կարդաց, դրանից յետոյ դարձեալ սկսում էր խօսել, և դեռ նրբ խօսքերը չէր վերջացրել խոյն մի ինչ որ պ. Խուտաբանից (օտար քաղաքացի), որ վերոյիշեալ երկու պարոնների հետ շատ սերտ յարաբերութիւն ունի, բղաւեց ԹԷ Գրիգոր Աբծրունին պէտք է լինի, „մենք արդէն խօսել ենք մեր մէջ", նրանից յետոյ եկան ամեն կողմից ձայները որոնք պ. Աբծրունուն էին ցանկանում, բայց ծնծաղելին այն էր որ չատերը պ. Աբծրունու անունը չէին կարող տալ և բղաւում էին որը Աղբուամպեանը, որը Աբծրունեանցը. վերջապէս տեսնելով որ շատ խառնակութեան, չը կարողացայ մնալ այդտեղ և չուտով դուրս գնացի, զարմանալով „Մշակի Հարսիկ ԹղԹակիցների վերայ, որ բացի ԹղԹակցութիւնով ժողովրդին գրգռելու, գործ էլ կատարում են մի և նոյն բաները *)։

*) Որ մարդիկ կան, որոնք աշխատում են լրենց համաքաղաքացիներին

ՆԱՄԱԿ ԹԻՒՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 30 յունվար 1884։ („Նոր-Դար"-ի թղթակից)։—Վերացեալ տարին մանկացաւ։ Սակայն ով պիտի նկարագրէ նախընթաց տարւոյ քաղաքական նուաճեան չրջանը և քնուճեան այն մեծ պատուհասները՝ որք պատեքանդրսա և ղեզխտոս սուգի մէջ ընկղմեցին, որք գՀէշմէ քար ու քանդ ըրին, որք Շապեն-Կարահիսար, Հաճըն, Ատալիա, Ադա-Բազար, Գատգիւղի մէկ գլխաւոր մասը և գԿաստգիւղ համահարակ հրդեհներով մոխրի վերայ նստեցուցին, և որք տարօրինակ անձրևներով՝ Նիկոմար և Տիգրիս չկրած խառնեվով՝ ողողումներ պատճառեցին Մնջագետաց դաշտավայրին վերայ Ո՛չ, ասոնք մեր ԹղԹակցութեան հաշուէն դուրս են։ Մեր պարագան է առ այժմ ազգային չրջանին մէջը և մօտը գանուող երեսները ներկայացնել ընթերցողաց։ Թէև կը խոտովանիմ որ՝ այս պարագն ալ ճշտիւ և լրիւ կատարելու համար՝ ոչ Մ այր-Ա ք ա ք ս ն երջող հայբենասէրը և հոգեբրքիւռ մատսայն ունիմ—որ ե ր ա ն ե ց և նախերգեց Կարնոյ Նոր-Տարին—և ոչ Գ ր ո ց—Բ ո ց ը ը Ծրագրողին կենսատու և սրտախօսիկ վերբ-ձինը—որ քաջալէպս նկարած է Մշեցի Հայոց Նոր-Տարին։—

Թող ներուի ինձ ուրեմն, որ միայն չեզուն և Թամաղուն յոյզերով լի՝ վերԹամ պատշաճից օրինաց համեմատ՝ մօտակայ և հեռակայ ազգայնոց բարերատիկ նոր օր, նոր տարի մաղԹել, Քրիստոսի Ատուածոյ ծննդեան հրաշավառ տօնը չնորհաւորել և ասպ անցնել անհուն ժամանակաշրջանաց և խնդրոյ մէջէն իմ օրակարգիս։

Անցելոյն վերայ յետադարձ ակնարկ մը բաւ է՝ 83—84-ի ազգային կենաց նկատմամբ տարեկան ընդհանուր հատմատուութիւն մը հետևիս ծրագրելու։

Արդ, ուստի սկսելու է այդ, որ ԹղԹակցութեան ժամանակագրական ձեւը անվթար պահուի, երբ մանաւանդ հակիրճ բացատրութիւնները կրնալու լինին, երբ մերԹ ընդ մերԹ յարակից պարագաները ալ ընդ նմին յիշեմ։

Պատշաճութիւնը կը պահանջէ որ Վաբչութեան բարձր նախագահէն, Ս. Պատրիարքէն յառաջաբանեմ, որ ամէն նոր տարւոյ առԹիւ նոր պատրիարք կ'ընտրուի, նոր ոգևորութիւն կ'զգենուը, և պատրիարքարան կ'երթնէր, Ս. Ծննդեան տօնին կը պատարագէր Մայր-եկեղեցին, և մայրաքաղաքիս Վերջապէսն ընդունած ֆերմանեզոյն յոյսերովն կը պարարէր Ազգը, անկէ առած վայրկեան խոստումներովը կ'օրօրէր և կը մխրԹարէր տառապեալ ժողովուրդը։

Նորին Սրբազնութեան անհրաժարելի հրաժարականաց տեսակները անցեալ տարի չատցած էին և տարբեր գոյներ ունէին, մանաւանդ վերջին հրաժարականները հրաժարելիք մէջ հրաժարականաց մէջ հրաժարելու գլուխ գործոց մ'էր։

Ս. Պատրիարքը այս տարի ոչ միայն չ'ինչաւ և պատրիարքարան, այլ կամաւոր հեռանդ ըլլալով մինչև իսկ Ծննդեան չնորհաւորութեան մարդ չկրնալ ընդունելը լրագրաց միջոցաւ կանուխէն ազդարարեց այցելելու փափագող ազգայնոց։ Սակայն, ինչպէս ուրիշ պատեհական անձինք, նոյնպէս Ազգային Ժողովոյ Մայր-Դիւանի երկու նորաթոյս Ատենապետները՝ յանուն երեսփոխանութեան, Ծննդեան երկրորդ օրը՝ առանց ձեւնարքը հողմոյն սաստկութեանը նայելու, կ'երԹան և Խազինդ,

Համոզելու, որ պ. Գրիգոր Աբծրունուն ընտրեն պատգամաւոր և ոչ ուրիշին, այդ տեղ մի յանցանք չը կայ, և երբ դրանք կարողանում են համոզել, դա գովելի է. ուրիշ բան է ԹԷ պ. Աբծրունու պատուասիրութիւնը լինչ գոհութիւն պէտք է ստանաը, երբ նրան ընտրողները նրան չեն ճանաչում, և նրա անունն անգամ նոր են լսում։

Խմբ.

կը ներկայանան Ս. Պատրիարքին, և յունվարի 9-ին տեղական երեք լրագրաց վիմատիպ հրատարակութիւնէն կ'լսացուի ԹԷ՝ Նորին Սրբազնութիւնէն սիրալիր ընդունելութիւն գտեր, և գրէԹԷ ժամ մ'ալ տեսակցեր են։

Ա՜հ, ուր են անցեալ տարուան պատմական մարմնոց եռանդը, ոգին և չարժումը։ Ո՞ւր են ուսումնական խորհրդոյ օրԹուածքս գրաքառեան և մոլեռանդ աշխարհաբառեան անգամներն՝ որք սկզբ սրտի կսկիծ՝ հանդիսաւոր կերպիւ Ներսէս պատրիարքին կը նեկայացնէին մէկ չեռքով գրաքառ ուղերձ մը, և միւս չեռօք աշխարհաբառ տեղեկագիր մը, որ ոչ նուազ դղրդից նաև Հայ գրական հրատարակը և կարճատես անձերէ պահ մը յարգութիւն գտաւ։

Ներսէս պատրիարքը՝ անցեալ տարի մեծ նպատակներ, կարևոր ծրագիրներ ունէր գործադրելու։ Պատրիարքարանի չէնքը պիտի ընդարձակուէր, եկեղեցականաց համար ընծայարան պիտի հաստատուէր, յորում երաւագիտութիւն ալ պիտի աւանդուէր, կենդրոնական բարձրագոյն գիշերօԹիկ վարժարան մը պիտի հիմնուէր, ներքին գործոց բարեկարգութեանց պիտի չեռնարկուէր, պատրիարքարանի եւմատական վիճակը պիտի բարեկոչուէր, ազգային կենդրոնական մատուռը աւանդ ձգուած տապակները չը պիտի խորուէին, գացող տնտեսական խորհուրդը պարտք պիտի չը ձգէր, Եւմատից ու Կատակաց հոգաբարձութիւնները պիտի կարմուէին, Մնակեանի ժառանգական գործարկիչ ծաղկեալ խնդիրը պիտի քննուէր, 57 անլոյծ խնդիրներն, հետզհետէ լրենց լուծումը պիտի գտնէին, Բերայի հսկիզեալ լոառնախումն հաշիւը պիտի յատկուէր, մայրաքաղաքիս եկեղեցեաց, վարժարանաց և այլ հատատութեանց ինչ կալուած և եկամուտ ունեներն պիտի ցուցակագրուէր, Սուլթան Յանձնաժողովոյն հաշիւները և Բարեգործական ընկերութեան քով գտնուած 4,000 լիրայի մօտ գումարը կենդրոնին պիտի յանձնուէին, Պէշիքթաշու Հայկազեան ընկերութենէն մնացած 800 լիրան (ոչ 450 լիրա) պիտի գանձուէր, Ցետսական միութիւնը՝ միութեամբ գործի պիտի սկսէր, Շահնազարեան վարժարանի կտակը պիտի վերահսկեղանանար, Շատախտ արկածեալք պիտի մխիԹարուէին։ Վանայ չրջակայից գաղԹականութեան պատճառը չը հարցաքննուած՝ Սօղոմոնի և Մարսուանցի 70—80 Հայեր յԱմերիկա գաղԹելով՝ յետին ծայր Թշուառութեան և յուսահատութեան կը մատնուին, ընդհանուր պանդխտութեան դարմանը պիտի խորհուէր, Լիմ Անապատ ԹէմԲ գանուող Երերին գիւղի ժողովրդեան բողոքը արձագանք պիտի գտնէր, էջմիածնայ սինոդի երեք անդամոց գրոյն հետ, նաև Սինոդի անդամ՝ Մեսրոպ եպիսկոպոսի գրած ընդարձակ տեղեկագիրը պիտի նկատուէր, Ս. Փրկչեան հիւանդանոցը արուեստանոց պիտի շինուէր, օրացոյցին հատցիԹը այլեւս երկցուհեայ պիտի յատկացուէր, վարչական կազմակերպութեան հարցը պիտի ծեծուէր, երեսփոխանաց բաշխման ցանկը Խիէքճեանի կինդանութեան ժամանակ պիտի նորոգուէր, Կիլիկոյ կաթողիկոսին պէտ ը ԹԷ պիտի փոխուէր, առաջնորդական վիճակները պիտի Ճշդուէին, պատրիարքարանի ընԹացիկ գործոց տնօրինութեան համար ձեռնհաս տեղապահ մը պիտի ընտրուէր, վոխանորդարանը—որ գեղծումներու միջավայր մ'է—պիտի մաքրուէր, Եղեսեան եպիսկոպոս և Պօլիս պիտի բերուէր, ՕրԹաքէօյի գերեզմանատունն տեղը՝ զօրանոց չինուիլ Թոյլ պիտի չը դրուէր, ձկպվիճաց և Հասասան արշաւանքը պիտի կասեցնէին։

Կը շարունակուի)

Ա լ ա ք

ՔԱՂԱՔԱԿԱՆ

18-ին (30) յունվարի լօրդ Սալիսբիւրիի նախագահութեամբ բացուեցաւ Դերթֆօրդում պատասխանատուական կլուբը։ Իւր ճառի մէջ, արտաքին գործերի նախկին մինիստրը և պատասխանատական կլուբակցութեան գլխաւորը յայտնեց, որ քաղաքական ներկայ դրութիւնը մեծ պատասխանութեան մէջ է, և ԹէԲ ապագայ ժողովում հարկաւոր է կարևոր բացատրութիւններ տալ արտաքին և ներքին գործերի մասին։ Խօսելով Եգիպտոսի վերայ, ասաց, որ այդ երկրում ներդրութիւնները օրէց օր չատանում են, ուստի և մեզ մնում է ձեռք զարկել գործոյս ձեռնարկութիւններ անելու, և նիստի ուենալով բնիկներին դէպի մեզ ունեցած անհամակրութիւնը և Ֆրանսիայի չատ նեղելութիւնը։ Առեւտրականը վրդովմունքով է նայում Անգլիայի Եգիպտոսում ունեցած քաղաքականութեան վերայ։ Դինեարլ Դօրդօնին վոտնձգաւոր պատուոն է չանձնարարած. այն գէնքովը, որը տուած է նրան,—Մահդիին չաղԹելու դրամն է, բայց Դօրդօնը սովոր է և ուրիշ գէնքով կռուել։ Սալիսբիւրին կարծում է, որ այդ միջոցը Թշնամուն ոչնչացնելու համար քիչ է։ Վերջաբանութեան մէջ լօրդ Սալիսբիւրին ասաց, որ այժմ անհնարին է դատարկել Եգիպտոսը ընչացս այդ ցանկանում են մի քանի պետական մարդիկներ, բայց չը գիտեն, որ Թողնելով Եգիպտոսը նրա այժմեան դրութեան մէջ, կը նշանակէ տեղիք տալ օտար ակրութիւններին ասելու, որ Անգլիան լուր սկսածը չը կարողացաւ վերջացնել։

—

„Новости" լրագրում մօտերումս սրված Ֆրանսիական մինիստրութեան նախագահ Ֆերրիի համառօտ ճառը բանւորների դրութեան մասին, նոյն լրագիրը ընդարձակում է հետևեալ տեղեկութիւններով, քաղած նոյն ճառի երեւելի տեղերից։ Ֆերրին, համաձայն է, որ Փարիզում ապրուստաբերութեան մի քանի ճիւղերը, համեմատելով օտարերկրեայ արդիւնաբերութիւնների հետ, մանաւանդ Դերմանիայ անի բաւականի վնասուած է։ „Ի՞նչ պիտի արած, այդ բանի դէմ մտում է Ֆերրին իբր ճառի մէջ, առաջարկում են աւելացնել մաքսային տուրքը, վերել սահմանները և նրա չընդունել օտարերկրեայ ապրանքները։ Պարոննէր, Փարիզի արդիւնաբերութեան հարցով պատրաստ հրապարակախոսների և ժողովրդական ատենաբանների առաջարկած միջոցները պէտք է ասել, որ բոլորովին անպէտք են և անյարմար, որովհետև վերել սահմանները և ընդունել արգելող միջոցները, այդ կը նշանակէ խորտակել Փարիզի արդիւնաբերութիւնը։ (Շատ լաւ է, շատ լաւ է։) Կը նշանակէ հարուած պատճառել ամբողջ արդիւնաբերութեանը։ Դանդատում են օտար երկիրներից մեզ ուղարկած ապրանքների քանակութեան վերայ, բայց չեն նմանում, որ մեզանից աւելի շատ ապրանք է գնում արտասահման, քան ԹէԲ այնտեղից մտնում մեզ մօտ։ ԵԹէ մեզնից արտահանած և մեզ մօտ ներս մտած ապրանքների մէջ համեմատութիւն անենք, կը տեսնենք, որ մեզ մնում է օգուտ գործեալ 1,200 միլիոն ֆրանկ, ուրեմն աւաջն ունենալով այս վիճակը, կարելի է արդեօք վերել սահմանները և աւելացնել մաքսը։ Իմ կարծիքով դորանից էլ վնասակար բան չի կարող լինել։ Վստահանում եմ յանդիմանել և այն կարծիքը, որը ցաւօք սրտի պատիւ ունեցայ լսելու մօտերումս, այն է՝ ԹէԲ արտաքսել Ֆրանսիայից օտարերկրեայ բանւորներին (պատգամաւորը բրեալոն. ես բողոքում եմ. ես այդպիսի բան չասացի, ես պահանջում էի միայն, որ Ֆրանսիական բանւորները գերապատ համարուեն, ես երբէք չեմ առաջարկել օտարազգի բոլոր բանւորներին արտաքսել Ֆրանսիայից)։ Նպատում եմ այնպիսիներին, որոնք տարածում են հասարակութեան մէջ այդպիսի վնասակար հայեացքներ։ Ա-դաչում եմ ձեզ ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վերայ, ԹէԲ այսպէս ներգործելով, լինչ կորստաբեր վոնասագործ պայմանների են ենԹարկում մեր երկիրը այն կողմից, ուսմ դէմ մենք այդ տեսակ մրցողների ենք դիմում։ Մինչդեռ արտասահմանում Ֆրանսիացի բանւորները չը կան։ (Մարաէն Նապօ պատգամաւորը. պարոն նախագահ, բոլոր եռանդով բողոքեցէք, դրանով դուք ծառայում էք Ֆրանսիային։) Ես եռանդով եմ բողոքում, ես այն կարծիքն եմ, որ մեր երկիրը խառնական և բեւեռական բանւորների ատելութեան ենԹարկելը մեծ անպատւութիւն է։ Ինչու՞ են գալիս մեզ մօտ խառնական և բեւեռական բանւորները։ Ցետոյ լինչ տեսակ աշխատութիւններ ունենք մենք, որոնց չենք կարողանում կատարել։ Չը գիտէք որ երկաԹուղիների աշխատութեան համար խառնական բանւորների մեծ պահանջ կայ, որոնք միևնոյն վարձով աւելի գործ են կատարում, քան ԹէԲ մենք, որ սովոր ենք միայն բաղդատութեան մէջ ապրելու և ոչ ԹէԲ աշխատելու։ (Կենդրոնից ձայները. „շատ լաւ է")։ Մեր գիւղական հասարակութիւնների մէջ դուք չէք կարող գտնել այնպիսի մարդիկ, որոնք օտարերկրեայ բանւորների պէս կարողանան, համբերութեամբ, տոկունութեամբ և եռանդով գործ կատարել, ահա, այս է ես կարծիքը և ցանկութիւնը"։

—

Սուակիմում ստացուել են Սենիատից բաւականին տխուր լուրեր։ Այնտեղ բնակիչները կերել են բոլոր չներին և այժմ սկսած ուներ միայն ձիեր և գանազան կաշիներ։ Մի տոպրակ գարի է մնացել։ ԵԹէ բերդապահ զօրքերին չ'յաջողուի ազատել, այն ժամանակ բնակիչները վոչ կը վոչնչեն վախչել դէպի Սուակիմ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

„Ազեալք"-ից արտատպում ենք հետևեալ յայտնի մարդկանց կարծիքները կառավարութեան մասին.

—

Կինը յոյժ կատարելագործեալ Սատանայէ մ'է։ Վ. Հիւգօ.

—

Կիները եղած են համայն աշխարհի կորստեան համար։ Մօլիէռ.

—

Զը կրաս օձը մը զոր կին մը չը կարենայ և զոհ դնել։ Պլուտոս.

—

ԵԹէ կիները չը լլային, մարդիկ ամուսնոյ հետ պիտի խօսակցէին։ Կիկերոն.

—

Երբ կը լսեմ կնոջ խոսիլը, կարծ կը տամ անկէ երբ սուրբ ոյժ մը։ Պետրոս Ադամեան.

—

Կինը Սատանի գործարանն է։ Մուրբ Պեռնարտոս.

—

Սրբոց դասը կը դատեմ այն ամուսինը որ երբէք արտունչ չատցած չէ իր կնոջմէն։ Սեքստոս Ե. Պապը.

—

Կիները դեղերի են Կլօսլշոկի քերովբէից նման, և սոսկալի օրէնք Մխոնի Սադայէլը։ Դիոդօ.

—

Կինը տխուր արարած մ'է և այժը նմա հաւոյ։ Տուրյանժոն.

—

—Այնու ամենայնիւ առանց կնոջ—աշխարհը կիատ է, կեանքն էլ կեանք չէ։ „Նոր-Դար"

իրենք կը խոստովանեն, որ իրենք իրենց մէջ խօսելու ժամանակ, լեզուն դա կաթոլիկոսացուի խնդիրը թէ մի ուրիշ նշանաւոր բան—եթէ Սպանդարեանը դրանց մօտեռնար, դրանք իսկոյն խնդիրը կը թողնէին և կը խօսէին եղանակի, առողջութեան և այդ տեսակ առարկաների վերայ։ Ոչ մէկ կապ չը կայ այդ յարգելի պարոնների և Սպանդարեանի մէջ։ Մ'թէթէ Սպանդարեանը Մակարական է. այդ էլ նոր լմայանք։

Ի՞նչ անուն տանք Արծրունու այդ վարմունքին։ Եթէ մենք Արծրունու գրելու ձևին հետևէինք և ասէինք.—դիցուք թէ Սպանդարեանը պատահմունքով հայ է, ոչ հայի սիրտ ունի, ոչ հայի հոգի, նրա համար օտար են ազգային եկեղեցին էլ դրա անցեալն էլ։ Դիցուք թէ այդ ամենը դրա սիրտը չէ տաքացնում։ Ի լուր թէ պէտև անշնորհք բայց ինստիկտով հասկանում է, որ միմիայն տգէտների մէջ կարող է ոտքի վերայ կանգնած մնալ, այդ պատճառով նա քաջ պաշտպան է ազիտութեանը ազատամտութեան անունով և պատրաստ զոհելու օտարին և իւր կրքերին թէ ազգային եկեղեցին, թէ կաթոլիկոսութիւնը... այդ ժամանակ ի հարկէ այդպիսի Սպանդարեանը կ'ընտրեր Գրիգոր Արծրունուն, որպէս զի սա իւր կողմից թեմական պատգամաւորի ընտրութեան ժամանակ իւր ձայնը տար—հաւատարիս Սմիրնեանին։ Թող անցեալը մոռանան և խղճով ասեն, արդեօք մեր «դիցուք»-ը աւելի հիմք չ'ունի։ Մենք ցոյց ենք տուել, թէ Ռուսահայերը ինչ չնչին քուէով են մասնակցում կաթոլիկոսի ընտրութեանը։ Մեր նախընթաց յօդուածներից կարելի էր տեսնել, թէ մենք ինչ նշանակութիւն կարող ենք տալ մեզանում կատարուող ընտրութիւններին, քանի որ կաթողիկոս ընտրողը Պօլսի ազգային ժողովն է, որի դէմ մենք ենք միայն բողոքել։ Մեր այն յօդուածներից, որանց մէջ մենք ցոյց ենք տալիս թէ ինչու աւելորդ է տրպել մեզանում այժմս կաթոլիկոսացուների կենսագրութիւնները, կարելի էր պարզ տեսնել որ մենք ոչ մէկ կուսակցութեան չենք պատկանում։

Այժմս Արծրունին յայտնի նպատակով մեզ Մակարի կուսակից է դարձնում, իսկ իրեն Ներսէսի կուսակից հռչակում։

Թող Արծրունին իւր հաշիւը տեսնէ. երբ նրան հարկաւոր է, Ներսէսին զրպարտէ, դաւաճան անուանէ, երբ հարկաւոր է, նրա կուսակիցը դառնայ։ Ինքը ազատ է։

Մենք ոչ կը զրպարտենք Ներսէսին, ոչ էլ կուսակիցը կը դառնանք։ Շնորհակալ ենք և չենք ուզում այն գոյութիւնը, որ կախուած է այս ժողովրդական անձին գովելումը և մի ուրիշին հայհոյելումը։ Շնորհակալ ենք և չենք ցանկանում այն դրութեան մէջ ընկնել, որ դուրսը ուրիշները մեզ յարգեն, համակրեն, իսկ մենք ներսումը մեզ արհամարենք։

Թող գնայ Թերթը, թող գնան բաժանորդները և հասարակութեան համակրութիւնը, եթէ մենք այդ ամենը մեր համոզմունքը ծախելու գնով պէտք է ստանանք։ Մենք երբէք թոյլ չենք տալ, որ մեր խղճի, մեր համոզմունքի վերայ բռնութիւն գործուի։ Նրա համար չէ հրատարակվում «Նոր-Դար»-ը, որ նրա խմբագիրը տգէտ և խաբուած ամբոխից ղեկավարուի կամ իւր համոզմունքները ծախէ։ Միմիայն շահամոլ, թուլամորթ, վատ և երկչոտ խմբագիրը, եկեղեցուն օտար և իւր անձնական շահերին հետամուտ անձը կարող է իւր համոզմունքներն բռնաբարել տալ կամ այս և այն հանգամանքին յարմարացնել։

Իսկ մեր համոզմունքներն—այդ կը յայտնուին։

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

Հ. Մ. տէր-Վռնդեանցը „Նոր-Դար-“ի խմբագրութեան կողմից իւր նամակի առթիւ արած նկատողութեանը այսպէս է պատասխանում։ Ես չեմ ասած, թէ ընտրութեանցը ներկայ եմ եղած այլ թէ այդ օրը մանեմ եկած գրեթէ բոլոր եկեղեցիները և անձամբ ղեկատած եմ ընտրող հասարակութիւնները։ Իմ ղեկատած եկեղեցիներում այն, չէին կարող ընտրողները հասնել մինչև-մի-լուսը, որովհետև դրանք կատարուում էին միևնոյն ժամանակում։ Բայց թէ եղել են անէնք, որոնք չատպել են ներկայ լինել Վանաց աւագ եկեղեցւոյ ընտրութեանը 12½ ժամին, այդ չ'նշանակում որ ընտրութիւնները կանոնաւոր չեն եղած. բացառութիւնը չ'պէտք է շրջոթել ընդհանուր բառով։ Բայց թէ ինչի այդ պարոնները թոյլ են տուել իրենց երկու տեղ մասնակցել, այդ է խնդիրը. մինչև անգամ կան անձինք որ երկու Թերթի տակ են ստորագրած որոնց Հանաչում էք և դուք *)։

*) Էլի հասանք Բօրչալու. մենք հէնց այդ էինք ուզում։ Այո, տէր հայր, կան անձինք, որ երկու Թերթի տակ են ստորագրուած։ Այդ տեսնելուց յետոյ, դուք էլ պէտք է համոզուէք, որ ընտրութիւնները անկանոն էին։ Օրինակ „Նոր-Դար“-ի խմբագիրը գնացել էր այն եկեղեցին, որտեղ նա մկրտուել է և ծուխ է հաշւում այսինքն Նորաշէնի եկեղեցին։ Այնտեղ ընտրութիւնը շատ կանոնաւոր էր։ Երբ ընտրութիւնը վերջացաւ „Նոր-Դար“-ի խմբագիրը գնաց Վանաց մայր եկեղեցին ոչ ընտրութեանը մասնակցելու և ոչ էլ պատշաճով այլ այնպէս pour plaisir։ Այստեղ տեսնելով, որ ընտրութիւնը բակուսին է կատարվում, ամենևին չէ ցուցակագրվում ընտրողների ոչ ազգանունները և ոչ էլ թիւը, և ոչ էլ հաշվում է թէ ժամաւոր է կամ ծուխին է պատկանում և ոմ ասես քանի տոմսակ ասես գրում է և պատրաստները գրպանից հանում—„Նոր-Դար-ի“ խմբագիրը բողոքեց և այդ էլ մի քանի անգամ։ Վերայ հասաւ մի խումբ, որը հէնց նոր մի ուրիշ եկեղեցում ընտրել—ընտրուել—ստորագրուել էր և սկսեց իւր գործունէութիւնը։ Այդ տեղի ընտրութեան

ՍԱԼՆԱՆԻՑ գրում են յունվարի 30-ից.—Նոյեմբերումս Սալեան հասաւ ս. Ներսէսեան նուիրակ գերապատիւ Սահակ վարդապետեան և այստեղից ուղղուորուեց Լենքարան։ Ամենքին յայտնի է գերապատիւ հօր երկրէ երկիր թափառելու նպատակը։ Սահակ հայրիկի արժանաորութիւնների մասին խօսելն աւելորդ եմ համարում, քանի որ նա յայտնի է Կովկասեան շատ քաղաքներին, բայց և այնպէս մխիթարութիւն ենք զգում տեսնելով հայ հոգևորականութեան մէջ Սահակ հայրիկի պէս ազնիւ և ընդհանուրի հաւատարմութիւնը վայելող արեղայ։ Հայր սուրբը լաւ ընդունելութիւն գտաւ Բօժէ-Պրօմիսլիայի և Սալեանու հայերի կողմից. հանգանակութեամբ ժողովեցին մինչև 240 րուբ. Այդ նուիրատուների մէջ առաջին տեղը բռնում են պար. Մ. Պօղոսեանեանց և Ն. Տէրեանց, բայց ցաւում ենք որ մի քանի վաճառականները այդ մխիթարում իրենց կենդրոնական տեղերից բացակայ էին, բայց յոյս ունինք, որ յարգելի պարոնները չեն պլանայ այդ սրբազան պարտականութեանը իրենց տուրքով նպաստելուց, և կը հասցնեն Սահակ

պարագլուխները առաջարկեցին „Նոր-Դար“-ի խմբագրին, որ նա էլ ընտրութեանը մասնակցէ և ստորագրէ Թերթին։ Այս անում էին այն նպատակով որ վերջը այդ կողմից բողոք չ'լինի, բայց „Նոր-Դար“-ի խմբագիրը ստորագրեց որ հոգևոր վարչութիւնը զանազան եկեղեցիների ստորագրութեան Թղթերը համեմատելով տեսնէ թէ որքան կանոնաւոր են եղել ընտրութիւնները։

Գալով հայր Մուշեղ Տէր-Վռնդեանցին, որին մենք յարգում ենք և գիտենք, որ նա իւր ստանձնած պաշտօնը եռանդով և խղճով կը կատարէ, պէտք է ասենք, որ մենք ամենևին մխտք չենք ունեցել նրան վիրաւորելու կամ նրա խօսքերին չը հաւատալու։ Մենք հաւատում ենք որ Մողնու եկեղեցիում, Աւետաց եկեղեցիում ընտրութիւնները կանոնաւոր են եղել, հաւատացած ենք որ հայր Մուշեղը շատ եկեղեցիներ չ'պէտք է և ըստ եւրոպիոյ ամեն բան կարգին է գտել։ Բայց արագ անցնելիս կարելի չէ ճշտութեամբ ստուգել և թէ բացի իւր տեսած եկեղեցիներից հայր Մուշեղը գիտէ, որ Թիֆլիսում ուրիշ շատ եկեղեցիներ կան։ Ամեն կողմից արտունչ և գանգատներ ենք ընտացել, և մեր տեսածի հետ միասին դնելով, կարծում ենք, որ նրատունք ունինք ասելու, որ ընդհանրապէս ընտրութիւնները անկանոն էին, պրանով ի հարկէ չենք ասում, որ հայր Մուշեղն է մեղաւորը։

Խմբ.

Հայրիկին Բագու կամ Թէ Շուշի քաղաք։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. այսօր երեք օր է, (փետրվարի 3-ին) որ շարունակվում է մեզանում մի կռիւ, որի հեղինակն է մի վաճառական։ Զանազան չարխուներով հարբեցնելով և վոդ տալով, արձակում է „հափուչի“ (օրմնագիրը) համքեաբի վրայ և մինչև անգամ կառավարում նոցա կռուի ձևերը։ Դրանց մէջ գտնվում են եղբայրք Շէգ-Սաքոյի, որոնք յայտնի են մեր քաղաքում իրենց անհանգիստ և կռուարար բնաւորութեամբ, իսկ դրանց մեծ եղբայրը Շէգ-Սաքոն, որին արդէն կալանաւորեցնել,մեզանումը է զանազան քրէական գործերում. դեռ տարին չի լրացել, որ մի մարդ է սպանել։ Այդ կռուի մէջ նորէն ուզում էր իւր ձեռքի մեծ դանակով, որ մի դաշոյն արժէր, սպանել վեհ. 1-ին մի քանի անձինք, բայց ոստիկանութիւնը կալանաւորեց այդ եղեռնագործին և իւր երկու եղբարցը։ Աղդարութիւնը պահանջում է ասել, որ քանի Շէգ-Սաքոն մեզանումն է, դեռ շատ սպանութիւններ կարող են պատահիլ և դա է իսկապէս պատճառը իւր երկու եղբարց յանդուգն կռուարարութեանց։

—

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ.—Մեր ակալբապաշտ և զարթեցան կրեից քնից և մի քանի հաշուատեսներ են նշանակել, որ երեցփոխանից հօրն տարուայ միջոցում վրայ բարգուած հաշիւները պահանջեն, որ օրը հաշուատեսութիւնը սկսուի, մանրամասն տեղեկութիւններ կը տամ այդ հետաքրքիր գործերից։

—

Նոյն տեղից.—Սորանից մի քանի օր առաջ, մի քանի չարագործներ մտնելով ցերեկ ժամանակ մինչև տունը, գողացել են 400 րուբլու չափ թէ զարդեր և թէ վոզ, տեղոյս ոստիկանութիւնը հետաքննում է չարագործներին գտնելու, բայց մինչև հիմայ չէ յաջողվում նրան։

—

ԲԱԴԻՒ.—Ամսոյս մէկին մի խումբ հայ թատերասիրաց, ուսեց մի ներկայացումն յօգուտ „Մարդասիրական ընկերութեան“ գրադարանի, „Պէպո“ և „Փարիզու կոշկակար“ պիէսաները։ „Պէպօն“ սառն անցաւ, բայց „Փարիզու

այլն և այլն, որոնց գլխաւորը և սրտին ամենամօտիկ պատասխանը ոչ թէ մի բան սովորելն էր լինում, այլ ընդհանրապէս սովորեցնելը, դաստիարակելը, չը գիտցած և չը սովորած բաների վերայ վիճաբանելը արժանաւոր մարդկների վերայ յանդգնութեամբ վայրահաչելը և այլն։

Գիտրգի ժամանակը այս շաբաթներում տխուր չէր անցնում։ Նա կարդացել էր նրանց մէջ իւր համար առանձին տեղ գրաւել։

Բոլորը գիտէին որ նա պատրաստվում է Պետերբուրգ գնալու, որովհետև հասարակութիւնը որդեգրել է նրան և մեծ գումար է հաւաքել նրա համար. այս պատճառաւ և մի առանձին համակրութեամբ էին վերաբերվում դէպի նրա անձնաւորութիւնը։ Մինչև անգամ երևտասարդների մի որոշ խումբ աշխատում էր առանձին մտերմութիւն հաստատել նրա հետ, իւր այս կամ այն նպատակներին նրան գործիք դարձնելու համար։

Ի հարկէ բոլորն էլ լաւ էին անում, բոլորն էլ կրաւունք ունէին, բայց մենք կը դառնանք մեր պատմութեան։

(Կը շարունակուի)

Անցեալ երեկոյեան Սօմարեանցի տանն էր։

—Իսկ քեզ մօտ ինչո՞ւ համար էր եկել։

Դրա համար այնտեղ ստորագրութիւն էինք բացել Պետերբուրգ ղրկելու նպատակաւ։

Ստորագրութեան Թուղթը ինձ մօտ էր, եկել էր խնդրելու, որ սկսենք վոզերը ժողովել։

—Շատ ստորագրեցին։

—Ոչինչ չեմ յիշում, à propos, էլիզավետա, հանկը խնդրեմ իմ այն աւուր հագած ըչխնգօտի գրպանից այդ Թուղթը և բեր ինձ։

Էլիզավետա Սերգէեվնան հնազանդուեցաւ։

—Տեսնենք, դու ո՞րքան ես ստորագրուել, դարձաւ նա ամուսնուն, Թուղթը ձեռքին սենեակը մտնելով։

—Տո՛ւր տեսնեմ, չ'գիտեմ։

—Տես, եթէ տասը րուբլուց աւել ստորագրած լինես, ականջդ պիտի քաշեմ, ատաց նա քնքշաբար և Թուղթը յանձնեց մարդուն։

—Այո՛ ինչ է, վախեցած վեր Թուաւ Տանպետեանցը, Թղթին նայելուց յետո։ Ինչ պատահեցաւ. անհանգստութեամբ հարցրեց նրան տիկինը։

—Վա՛յ, վա՛յ, գժուածՆ եմ եղել, բացագանչեց Տանպետեանցը, առանց կինոջ հարցին ուշադրի պատասխանելու։

—Ի՞նչ պատահեց քեզ Աչուառա, ասա՛ Հ, տասը րուբլուց աւելի ես ստորագրուել, դարձաւ նա ամուսնուն, Թուղթը ձեռքին սենեակը ման

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ
(ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԴԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)

3 Փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ծերակոյտի առաջին դեպարտամենտի գլուխացոյց գործերի բաժանումի օբեր-պրոկուրօրը ընկերոջ պաշտօնակատար Գօրեմիկինը նշանակուած է օբեր-պրօկուրօր երկրորդ դեպարտամենտում։

Մեզ թւում է, թէ ռուսական հպատակութիւնն քննդունելու առիթ „Times“ լրագրում մի յօդուած դուրս եկաւ, յայտնելով այն միտքը, թէ Անգլիան չը պիտի չափից դուրս վրդովուի այդ դէպքից, որը ռուսական յարձակողական շարժումների բնական և անխուսափելի հետևանքն է անդը-կասպեան երկրում։ „Journal de St-Petersbourg“ լրագիրն էլ այսպիսի հայեացքի առիթ գոհունակութիւն է արտայայտում ասելով, որ դա համապատասխան է երկու տէրութիւնների ցանկութեանը, պահպանել վոխադարձ բարեկամական յարաբերութիւնները Միջին Ասիայում։ Ռուսական կառավարութիւնը, հետևելով իւր քաղաքական նպատակներին թիւրքմէնների անապատներում, կը տատանուէը ոյժով տիրելու Մերվին չը կամենալով տարակուսութիւն յարուցանել իւր և Անգլիայի մէջ։ Բայց որովհետև Մերվի թիւրքմէնները լսենք ցանկացան կամաւոր կերպով ընդունել ռուսական հպատակութիւնը, ուստի նա չէը կարող մերժել խաղաղասիրութեամբ վերջացած այդպիսի մի գործ։ Ցետոյ, հերքելով „Times“-ի և այն երկիւղը, որ նրը թէ Ռուսիան ապագայում կարող է տիրել պարսկական հողի մի մասին, այն է Սեվանսկն „Journal de St-Petersbourg“-ը կասկածում է, որ Ռուսիային կարևորութիւն չ'ունի տիրել ապագայում այդ տեղին և ընդհանրապէս վնասել Պարսկաստանին, որի շահերը համերաշխ է համարում իւր շահերի հետ։ Վերջաբանութեան մէջ լրագիրն ասում է թէ, Անգլիային և Ռուսիային բոլորովին օգուտ չէ, Միջին Մսխալում միմեանց վնաս են, այլ ընդ հակառակը նրանց փոխադարձաբար շահերը պահանջում են, որ նրանք համաձայնին և ընդհանուր ոյժով յառաջ տանեն իրենց քաղաքակրթական նպատակները այդ երկրներում։

Երէկ Կովալեւսկու Թոդման հանդիսին ներկայ էին Կոնստանդին, Մեխայիլ Նիկոլայեվիչները և Վլադիմիր Ալեքսանդրովիչը։ Թաղումը եղաւ Սերգիևսկի անապատում։

„Новое Время“-ը հաղորդում է, որ գործարանատէրերը, ոտնձգութիւնից դողութիւնից ստիպուած, կամենում են պահպանել բանւորների աշխատութեան օրերի թիւը, կամ աշխատութեան վարձը։ Մտադիր են այդ առարկայի վերաբերմամբ յարաբերութիւն ունենալ կառավարական իշխանութեան հետ։

ԼՕՆԴՕՆ. Հրատարակուած է Սուդանի գրութեան մասին Գօրդօնի նախագնծը։ Գօրդօնը առաջարկում է վերադարձնել Սուդանը սուլթաններին նախկին սեփականներին և Թոդնել նրանց ազատ ընտրութեանը, կամ ընդունել սուտ մարգարէի գերագոյն իշխանութիւնը, կամ մնալ անկախ։ Գօրդօնը յայտնում է, որ Սուդանին տիրելը անհնարին է և Թէ անգլիական կառավարութիւնը երբեսյն չը պիտի հաւանի այդ երկրները։

ԿԱՅԻՐՕ. Խեդիվի գրութեան համաձայն սկեսրական խորհուրդը վակլում է։

ՍԵՒՍԿ. Այստեղ հիմնուեցաւ նահանգական զեմստվոյի վոխադարձ ապահովութեան ընկերութիւնը, եղջերաւորը անասուններին ժանտախտից պաշտպանելու համար։

ՎՕԼՕՆԱ. Սարուվէի գործարանում վերջերս 2-րն այրուեցան երկաթգողոզ վագոնները չինելու հիւանութեան շինութեան մէջ մեքենաներ, վագոններ և այլն նկատեղէններ.

ԻՐԻՏ. Արևելեան Սիբիրի առևտուրը վերջին ամիսներում չաղող է առաջ գնում։ Տօնավաճառանոցներում այս երկրի ապրանքների պահանջը շատ է։

ՎԵՆՆԱ. Աւստրիական ընկերատպ պատգամաւորների ժողովը հաստատեց կառավարութեան բացառական մերժոցների վերաբերմամբ երկու կարգադրութիւնները, որոնցից մինը մամուլի և կարծիքաւոր անձինքների մասին է, իսկ միւսը վերաբերում է երդուեալների դատարանի առժամանակ դադարմանը, ինչպէս Վեննայում, նոյնպէս և նրա շրջակայքներում։

ԼՕՆԴՕՆ. Կառավարութիւնը յայտնեց, որ պատգամաւորների ժողովը չի կասկածում Գօրդօնի Սուդանում դեսպանութեան յաջողութիւնների վերայ։ Փետրվարի 19-ին կը ժամանեն Սուակիմ անգլիական զօրքեր։ Անգլիական կառավարութիւնը, որը չանձն է առել իւր վերայ Եգիպտոսի պաշտպանութեան պատասխանատուութիւնը, չանձն է առնում նոյնպէս Կասմիը ծովի եզերքների խաղաղութեան պաշտպանութեան պատասխանատուութիւնը։

Լրագիրների ասելութեամբ, անգլիական կառավարութիւնը 250,000 ֆ. ստերլինգ կրեդիտ կը պահանջէ Սուդանի արշաւանքի համար։

ԿԱՅԻՐՕ. Սուակիմ ուղարկած անգլիական զօրքերը երկուշաբթի օրը դուրս կը գնան դէպի Սուէց գեներալ Գրագալմի հետ։ Խաղաղ ցեղերը յայտնի առաջնորդները պահանջում են սուտ մարգարէի կուսակից Օսման Դինգլից, որ նա յարգէ և չը մօտենայ նրբանց նահանգներին, հակառակ դէպքում սպառնում են պատերազմելու։

Ապստամբները տիրել են Կասալային

ԲԵԼԳՐԱԴ. Մինիստրութիւնը սահատութիւն ունի։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ
3 Փետրվարի.

Լօնդօն	$23^{5}/_{16}$, $23^{13}/_{32}$
Համբուրգ	199, $199^{3}/_{8}$
Փարիզ	245, $245^{1}/_{2}$
Պօլուիմպերիալը	8 ր. 43 կ.
Ադծաթը	1 „ 39 „

Պետերբուրգ. բանկի 5% տոմսեր.

1-ին շրջանի	96 ր. 87 կ.
2-րդ „	93 „ 87 կ.
3-րդ „	95 „ — „ ծախ".
4-րդ „	94 „ 62 կ.
5-րդ „	94 ր. 87 կ.

Արևել. փոխադրութեան 100 և 1000 ր.

1-ին շրջանի	93 ր. 12 կ.
2-րդ „	93 ր. ծախ".
3-րդ „	93 ր.

Վերնահանութ. տարած 5% տոմսեր

1-ին շրջանի	212 1/4
2-րդ „	92 ր. 87 կ.

Պետերբուրգի բօրսան խաղաղ է։

4 փետրվարի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Յայտարարուած է բարձրագոյն հրամանը, որի համաձայն վերայ հաստատուած հիմնարկութիւնները, ուսումնական և ուրիշ ընկերութիւնները, մասնաւոր ժողովները և ձեռնարկութիւնները պատգամաւորութիւնները պիտի ընտրուին միայն գեներալ նահանգապետների թոյլտուութեամբ, իսկ այն տեղերը, որոնք չեն ենթարկուում գեներալ նահանգապետների իրաւունքներին, պիտի ընտրուին, առաջարկութեամբ տեղական իշխանութեան, թոյլտուութեամբ ներքին գործերի մինիստրի։

Մինակ քաղաքի նախկին սրբ-եկեղեցոց Անտոնին իւր չունի տարի եկեղեցական աստիճանում ցոյց տուած ծառայութիւնների համար արժանացաւ Բարձրագոյն հրովարտակի, որի մէջ յիշում է Նորին սրբազնութեան ծառայութիւնները ուխտաւորների ուղղափառ եկեղեցու հետ միացնելու գործում։

Այսօր Անտոնի սրբ-եկեղեցոց չունի ամեայ յոբելեանի առիթ Կազանսկի մայր եկեղեցում հանդիսաւոր մօտերին կատարուեցաւ։

Դեպարտամենտի կից հիմնուած կօմիսիան, որը պարապում էր գործերը չինելու և գործերի առևտուրի կանոնների քննութեամբը, վերջացրեց իւր պարապմունքները։ Կօմիսիան, ի նկատի ունենալով գործարանատէրերի նպաստիչ անօրէնների գործադրութիւնը, քննադատում էր այն հարցերը, որոնք վերաբերում էին գանձարանի չահերի պաշտպանութեանը գործերը չինելու ակցիզի աւելացնելուն և գործերի առևտրականութեան աշխատութիւնների վերաբերեալ հարցերով։

Երկաթուղու տարիքի համար հիմնուած կօմիսիան, նախագահութեամբ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի, վերջացրեց պարապմունքները, և ինչպէս լսում է, մինիստրութիւնը եկաւ այն եզրակացութեան, որ երկաթուղիների տարիքի գործը, հարկաւոր է ենթարկել կառավարութեան հսկողութեանը։

ԼՕՆԴՕՆ. Քաղաքային ընտրութիւն ժողովուած պաշտպանողականների բազմաթիւ խումբը եկաւ այն եզրակացութեանը, որով պահարակում է կառավարութեան վարչական ենթակայութեանը և անուանում է նրան Թոյլ և անհաստատ։

ԱԹԻՆՔ. Տենար Հրուանդանի մօտ փոթորիկը ցրուեց ռուսական նաւատորմիղը։ „Չեսցօգ Էդինբուրգի“ պատերազմական շոգենաւը հիասթ Սալամինին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Թուրքեստանի երկրի բարենորոգումների համար հիմնուած կօմիսիայի նեստերը մօտ օրերում կը սկսուեն կոմս Իգնատիեվի նախագահութեամբ։

ՄՈՍԿՈՒԱ. Երէկ Մեծ Թատրոնում եղաւ Չայկովսկու „Մազեպա“ անունով նոր օպերայի ներկայացումը։ Չայկովսկուն շատ ծափահարեցին և տուին երկու զանկեայ պսակներ։

Մտադիր են հիմնելու համալսարանին կից ուսումնականների հոգեբանական ընկերութիւն։ Ընկերութեան նպատակն է մշակել ընդարձակօրէն հոգեբանութիւնը, յարակցելով նրա հետ հոգեկան հիւանդութիւնները և ազգերի հոգեբանութիւնը։

ԽԱՐԿՕՎ. Իշխանի նահանգական դատարանի պրօկուրօրը պահանջում է Խարկովի նահանգական կառավարութենից Սարօ-Բելսկի քաղաքային բանկում ծառայող տասնմէհատուորները. Շեստակովին, Գավրիլովին, Վլասովին և Հաշուատես Մելենկովին, որոնք ենթարկուած են դատարանին իրենց գերծումների համար։

ՎԻՐՆԻ. Յունվարի սկզբներում ժամանեց Կաշգար մեր հիւպատոս Պետրովսկին, որին դիմաւորեցին չինական աստիճանաւորները և ռուսաց վաճականները։

ՊՕԶՆԱՆ. Փետրվարի 7-ին (19) Ռուսիայից լոզերի արտահանումը, պօզնանի սահմաններին վերայով արգիլուած է։

ՀԱԳ. Երէկ Ռուսական դեսպան Սօվսկին մարմինը դինուորական պատուով բերուեցաւ ուղղափառ եկեղեցին, ուր ներկայութեամբ Թագաւորի, Թագաւորական ցեղի անդամների և ներկայացուցչ անձինքների կատարուեցաւ այսօր հոգեհանգիստ։

ԿԱՅԻՐՕ. Սինկատը տիրելու ժամանակ սուտ մարգարէի զօրքը կոտորեց ոչ Թէ միայն բերդապահ զօրքերին այլ նաև 200 կանայք և այնքան էլ երեխաներ։ Երկիւղ են կրում, որ մինչև օգնութիւն հասցնելը ապստամբները կը պաշարեն Տօկկարը։

5 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Երէկ Թագաւոր կայսրը անձնիկալ կերպով այցելեց Սեմեօնովսկի—Ալեքսանդրովսկի հիւանդանոցը, որի մէջ գտնւում են դիպաերևոյթ ցաւով վարակուած հիւանդները։ Այցելելով բոլոր վարդապետներին, կարմրուկի ցաւի, բգացաւի և ուրիշ վարակիչ հիւանդութիւնների սենեակները և բաժանումները. Նորին Մեծութիւնը երկար խոհանոց, ուր տեսաւ կվասի և կերակուրների համը, չեռոյ եղաւ մատուռում և անդամնահատութեան դահլիճում։ Հրատարակուած է բարձրագոյն հրամանը վոխարկել պետական բանկի հիմնարկութիւնների մէջ հոգաբերի սոլո—վեկսելների կանոնները։

Անտոնի սրբ-եպիսկոպոսի յիսուն ամեայ յոբելեանի առիթով, որը այժմ 87 տարեկան է և հանգիստ ապրում է Պոժայսկի մենաստանում, Կովենի նահանգում, բացի Կայսերական հրովարտակից, ուղարկուած են հաստիները Սլավոնական ընկերութեան կողմից և շատ հեռագրներ։ Մերակոյտը վոխեց Մոսկուայի գատաստական պալատում կայացած „Московскій листокъ“-ի համարի պատուհովի գործը վճիռը և կարգադրեց, յանձնել գործը պալատի մեռս բաժանումին։

ՄՈՍԿՈՒԱ. Երէկ գեներալ Չերնիաեվի Պետերբուրգ գնալու ժամանակ ներկայ էին այստեղի առևտրական փերմանների ներկայացուցիչները, որոնցից Տիմօֆէյ Սավիչ Մօրոզովը բոլորի կողմից չնորհակալութիւն արեց Չերնիաեվից, ինչպէս կառավարութեան ներկայացուցչից, որը օգնում է մեր վաճառականութեան զարգացմանը Միջին Ասիայում։

ԼՕՆԴՕՆ. Երէկ կրկեն կայացաւ բազմաթիւ ժողով, որը վճռեց յանդիմանել մինիստրութեան քաղաքականութիւնը Եգիպտոսում և պահանջեց ազատել պարլամենտը։ Ժողովին ներկայ էին պարլամենտի շատ անդամներ, որոնք պատկանում են պահպանողական կուսակցութեանը։

Խմբագիրը—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ
«Գործակատարի
Յիշատակարանից» և
Հրդէհ Նուէրագործարանում.
Արժէք 50 կոպ.
Ծախվում է Կենդրօնական
Գրավաճառանոցում և Հրատարակչի մօտ. Կատօլիչեսկայա փողոց. «Աստուածատրեան և ընկ.» առևտրական տան մէջ։
Աբել Ասլրէեան.
3—3



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՒԻ ԳԻՆԸ
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԴՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒԻ ԵՒ ԲԱԴՈՒԻ ՄԻՋ

ԲԱԹՈՒՄԻՑ ԲԱԴՈՒ		ԲԱԴՈՒԻՑ ԲԱԹՈՒՄ	
Կայարանները.	Գնացքի ժամանակը.	Կայարանները.	Գնացքի ժամանակը.
Բաթում	8 ժ.		
Սամտրեդի	12 ժ.—18 ր.	Բագու	10 ժ.—23 ր.
Կվիրիլե	2 ժ.—30 ր.	Հաջի-Կարուլ	3 ժ.—16 ր.
Միխայլօվո	6 ժ.—33 ր.	Ուջար	8 ժ.
Թիֆլիս	11 ժ.—11 ր.	Ելիսավետապոլ	12 ժ.—48 ր.
Ադստաֆա	2 ժ.—48 ր.	Ադստաֆա	4 ժ.—28 ր.
Ելիսավետապոլ	6 ժ.—39 ր.	Թիֆլիս	8 ժ.—31 ր.
Ուջար	10 ժ.—58 ր.	Միխայլօվո	12 ժ.—46 ր.
Հաջի-Կարուլ	3 ժ.—30 ր.	Կվիրիլե	5 ժ.— 3 ր.
		Սամտրեդի	7 ժ.—20 ր.
Բագու (Հասնում է)	8 ժ.	Բաթում (Հասնում է)	11 ժ.—21 ր.

Ապրանքի և ճանապարհորդների գնացքը Թիֆլիսի ու Սուրամի մէջ.

Թիֆլիս	3 ժ.—11 ր.	Սուրամ	1 ժ.—38 ր.
Սուրամ (Հասնում է)	9 ժ.— ր.	Թիֆլիս (Հասնում է)	8 ժ.—

II. ՓՈԹԻ ԳԻՆԸ.

Ապրանքի և ճանապարհորդների գնացքը Փոթիի և Սամտրեդի մէջ.

Փոթի	8 ժ.—45 ր.	Սամտրեդի	7 ժ.—30 ր.
Նօվօ-Սենակ	10 ժ.—33 ր.	Նօվօ-Սենակ	8 ժ.—35 ր.
Սամտրեդի (Հասնում է)	11 ժ.—39 ր.	Փոթի (Հասնում է)	10 ժ.—24 ր.

III. ԿՈՒԹԱՅԻՍԻ ԳԻՆԸ.

Ճանապարհորդների գնացքը.

Կայարանները.	Գնացքի ժամանակը. № 1.	Գնացքի ժամանակը. № 2.	Կայարանները	Գնացքի ժամանակը. № 1.	Գնացքի ժամանակը. № 2.
Ռուխթայիս	12 ժ.—25 ր.	5 ժ.—20 ր.	Լիխն	1 ժ.—30 ր.	6 ժ.—23 ր.
Լիխն (Հասնում է)	12 ժ.—49 ր.	5 ժ.—44 ր.	Ռուխթայիս (Հասնում է)	1 ժ.—54 ր.	6 ժ.—47 ր.

Ծանօթ. Գիշերային ժամանակը կէս օրուայ 6 ժամից չետոյ նշանակուած է սև շրջանակով. ժամերը ցոյց տրուած են Թիֆլիսի ժամացոյցով։

Дозволено цензурою. Тифлисъ, 6-го Февраля 1884 г. Տպարան Ս. Ա. Միխելսոնի ա. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д. № 12.